

առանձինն կը խօսի. Խաչատուր, այս էր իւր անունը, կրօնին պատճառաւ Մոնեստանիայէն (Վալարիա) փոխտուելով՝ Ռոման եկաւ, եւ քիչ ժամանակուան մէջ իւր քրիստոնէական առաքինութեամբքն եւ ի մասնաւորի իւր առաջ քատս անչափելի գթովը՝ կրցաւ ամենուն համա- կրանքն ու մեծարանքը յինքն ձգել. իւր հօտին մէջ խաղաղ ու զուարթ կ'ապրէր՝ երջանիկ հա- մարելով ինք զինք՝ որ գրեթէ մի եւ նոյն գաւ- առին մէջ՝ ուստի դաւանած կրօնին համար հալածուած էր՝ կտոր մ'երկիր գտնելով կրցաւ նոյնն անարգել ու համարձակ պաշտել, երբ յանկարծ կնաւ ու որդւովք ձերբակալուելով՝ Ատեան տարուեցաւ: Հոն Ատեփան Վոյվոտա ինքնին կը հրամայէ անոր որ կրօնն ուրանայ եւ յունական ծիսիւ մկրտուի: Քահանայն՝ առանց ամենեւին աղերսանօք իւր հալածչաց կատաղու- թիւնը ցածուցանել ջանալու, կը մերժէ զայս եւ անյուր յանդգնութեամբ ալ կը համարձակի հայհոյել անոնց կրօնը՝ որոնք իրենը կը նախա- տէին ու կ'աղարտէին: Վերջապէս Վոյվոտային համբերութիւնը կը հատնի. կը հրամայէ իւր ծառայից կապել քահանային ձեռուըններն ու ոտուընները եւ աչուընները բրել: Հրամանն իս- կոյն կը կատարուի: Քահանայն այս ահագին տանջանաց մէջ անհամբեր մահուան կը սպա- սէր՝ որ զինք ազատէ, բայց այս միջոցին կը լսէ իւր կինն ու որդիքն ալ մեռցընելու հրամանը: Հոս այն անմեղ զոհերուն աղիողորմ՝ ու սրտակէզ վայնասունն եւ յուսահատական հառաչանք- ները վերջապէս քահանային հաստատամտու- թեան յաղթելով՝ յունական ծիսիւ կը մկրտուի:

Մինաս սարկաւազ՝ այս անագորունու- թիւնները պատմած միջոցին՝ զինք ոգեւորող ցա- սունն ու արգահատութիւնը՝ կարծես թէ ունիչ նուազ կը գրգռեն զինք երբ եկեղեցեաց քանդ- ման վրայ ճառելով՝ մանրամասն կը խօսի սուրբ անօթոց աւարառութեան, պատկերաց խորտակ- ման, սրբաղան գրոց փճացման վրայ, եւ կրկին ու կրկին այս դիպաց վրայ կ'անդրադառնայ, իբր թէ այս չարեաց հեղինակները քիչ դատա- պարտած ըլլայ: Այս զգածու մտիւրաւ կ'ըմբռն- նուի այնու որ՝ նոյն առարկայից մեծագոյն մասն իւր դժբախտ հայրենիքէն էր եկած, ուստի որ ինք զեռ նոր բաժնուելու ստիպուեր էր. ասոնք իրմէ յառաջ արքորք դացողներուն ձեռօքն աւ- արառութենէ պահպանուած էին, ոչ եթէ իրենց արժէքին համար՝ այլ իւր խորհրդական նշան աստուածային պաշտպանութեան, եւ գոգցես ժողովատեղի մը կը կազմէին այն առանց հայրե-

նեաց թշուառներուն, որոնք կը թափառէին հանգստեան վայր մը գտնելու համար: Բնակա- նաբար այսպիսի յիշատակաց քանդումն ու խոր- տակումը, որուն վրայ իւրաքանչիւր որ կը ցաւի, հեղինակիս վրայ՝ որ արդէն իսկ հայրենեաց ցաւովն ու խորին հաւատքով ոգեւորուած էր՝ մարդկան ջնջման վրայ զգացած էն պակաս ազդե- ցութիւն չէր կրնար ունենալ:

Աւստի հարկաւոր կը համարի Մինաս մեկ- նել՝ թէ ինչպէս Նախախնամութիւնը թոյլ կու տայ որ այսպիսի անագորունութիւնը գործուին, եւ այս մեկնութիւնս՝ որ իւր խորին ու յստակ հաւատքէն կը բխէ՝ պարզ սակայն բանաստեղ- ծական զօրութեամբ լին քանի մը անով կը բացա- տրէ:

Ի մեր անբաւ գործոց չարեաց  
Յասունն ետուր Հայոց ազգաց,  
Իւր սուրբ մարմինն ոչ խնայեաց,  
Եւ արկանել ներքոյ ստաց:

Յառաջն իւր սուրբ տունըն մասնեաց,  
Բզսուրբ մեռանն յերկիր ցրուեաց  
Ձեւ սուրբ գրեանքն հրով այրեաց,  
Ձեկեղեցոյ հիմըն շրջեաց:

Եկեղեցին քար եւ կիր է,  
Եւ իւր անօթն ի այլ նիւթէ,  
Եւ սուրբ գրեանքն ուսուցիչ է,  
Խաչ եւ բոկիք ի արծաթէ:

Բերան չուին որ բամբասեն,  
Ոչ ձեռս եւ սաս որ մեղանչեն,  
Վասն մեղաց մարդկան որ են,  
Յոյցս մարդկան պատիժ կրեն:

Այսչափ անգթութեան գործեր տեսնե- լով՝ զորս հայ հեղինակը Ատեփան Վոյվոտային եւ անոր ազգին կու տայ, կը մտաբերէինք հաս- տատել թէ այս՝ թերեւս չափազանցութիւն եւ կամ հեղինակին հնարագիւտ մտաց ծնունդն ըլլայ: Արդեամբք Մինաս սարկաւազ իւր ազգին թշնամեաց չի խնայեր ամենեւին. զանոնք միայն «անօթէն, պիղծ, արբանակ սասանայի» եւն վերագիրներով ի մէջ կը բերէ: Իւր Մոլտաւա- ցոց դէմ՝ անողքելի ատելութիւնն, ինչպէս եւ առ իւր կրօնակիցս արգահատութեան բնական զգածումը, կրնային մեզ իւր պատմածին ճշմար- տախօսութիւնը կասկածել ընել՝ եթէ որ Հայ- ոց դէմ՝ գործադրուած բռնութեանց նկատմամբ գրածները՝ նոյն դարու ուրիշ մատենագրէ մը՝ որ այս ամէն ստգտանքէ զերծ է՝ չհաստատուէին: Եւ իրօք Օրիսովիուս լին հերեւելի աստուածա- բանին ու ճարտարախօսին տարեգրոց մէջ կը կարդանք. «Ամէնէն անմեղ մարդկան քիթը,